## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## N «ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-19/25-1»-4 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «11» հունվարի 2021թ.

«Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի գլխավոր քարտուղար Տ. Մարտիրոսյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Յուքոմ» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության կորպորատիվ բաժնի ղեկավար Դ. Միրաքյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հիմք ընդունելով 2020 թվականի հունվարի 14-ին կնքված N «ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-19/25-1»-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.2 և 7.15 կետերով սահմանված պահանջները՝ Կողմերը որոշեցին.

1.1 Հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ բջջային հեռախոսների ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

**1.2** Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, սակայն ոչ ուշ, քան 2021 թ. դեկտեմբերի 30-ը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Համաձայնագրի պայմանները կիրառվում են 2021 թվականի հունվարի 1-ից հետո կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև համաձայնագրի կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում: Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված պարտավորությունները Պայմանագրում թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ մարդու իրավունքների
պաշտպանի աշխատակազմ
ք. Երևան, Պուշկինի 56ա
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011023067
ՀՎՀՀ 02572073

-----------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
Կորպորատիվ վաճառքի
Բաժնի ղեկավար
Դ. Միրաքյան

-----------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«11» հունվարի 2021 թ. կնքված
«ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-19/25-1»-4 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64211130/501 (1/1) | Բջջային հեռախոսների ծառայություններ | **55000** | **110000** | **165000** | **220000** | **275000** | **330000** | **385000** | **440000** | **495000** | **550000** | **605000** | **660000** | ***660000*** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ մարդու իրավունքների
պաշտպանի աշխատակազմ
ք. Երևան, Պուշկինի 56ա
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011023067
ՀՎՀՀ 02572073

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
Կորպորատիվ վաճառքի
Դ. Միրաքյան Բաժնի ղեկավար

---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.